ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» սեպտեմբերի 2018 թվականի N: 180 ք.Գյումրի

ԿԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Կարինե Ղազարյանի 2018 թվականի սեպտեմբերի 24-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Ղազարյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 10 աշխատանքային օր՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ից 12-ը ներառյալ:
2. Կարինե Ղազարյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Արմինե Զոհրաբյանին:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է